

ԿՈԴ
050.0065 Ն. 19.04.22

19 ապրիլի 2022 թվականի թիվ 65-Ն

**ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(2022 թվականի առաջին եռամսյակ)**

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը, **ղեկավարվելով** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
տեղակալ**

Ներսես Երիցյան

2022 թ. ապրիլի 21
Երևան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլիկ շեմի (2022թ. առաջին եռամսյակ)

2022 թվականի ապրիլի 19-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:

Համաձայն [«Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման»](#) կարգի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլիկ շեմը (այսուհետ նաև՝ կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿՀԲ)): Կենտրոնական բանկը ԿՀԲ-ն սահմանելիս առաջնորդվում է [«Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը»](#) փաստաթղթի դրույթներով, համաձայն որի, ԿՀԲ չափը սահմանելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համար հիմք են հանդիսանում Բազելյան մեթոդաբանությամբ գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշի ճեղքվածքը, համակարգային ռիսկի զարգացումները բնութագրող ֆինանսական ցիկլի ինդեքսը և վաղ ահազանգման այլ ցուցանիշներ:

Կապիտալի հակացիկլիկ շեմի վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է վարկավորման և ֆինանսական շուկայի զարգացումների համապարփակ վերլուծությամբ: Մասնավորապես՝

1. 2022թ. առաջին եռամսյակի համար գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը նախորդ եռամսյակի համեմատ փոքր-ինչ աճել է և կազմել մոտ 70.6%¹: Այս ցուցանիշի համար բազելյան կոմիտեի մեթոդաբանությամբ հաշվարկված երկարաժամկետ տրենդից շեղումը կրճատվել է և կազմել մոտ -1.6 տոկոսային կետ, ինչը չի նախանշում կապիտալի հակացիկլիկ բուժերի դրական սահմանաչափի կիրառություն: Հարկ է նշել, որ ԿՀԲ որոշումների կայացման համար կենտրոնական բանկը դիտարկում է նաև վարկային ցիկլը բնութագրող այլ վաղ ահազանգման ցուցանիշներ, ինչպիսիք են վարկավորման պաշարային և հոսքային ցուցանիշների աճի միտումները, ֆինանսական ցիկլի ինդեքսը², անշարժ գույքի շուկան բնութագրող ցուցանիշները և այլն:

¹ Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՀՆԱ-ում (%-ով): 2022թ. առաջին եռամսյակի գնահատականը նախնական է և կարող է հետագայում փոփոխվել՝ կախված ՀՆԱ փաստացի տվյալների հիման վրա վերահաշվարկի արդյունքներից:

² Ֆինանսական ցիկլի ինդեքսի մեթոդաբանության հակիրճ նկարագրությունը տրված է 2020թ. տարեկան [Ֆինանսական կայունության հաշվետվության](#) Ներգիր 5.1-ում

2. Վարկավորման շուկայում շարունակվել են 2021թ. չորրորդ եռամսյակում արձանագրված վարկավորման աճի վերականգնման միտումները: Ընդ որում, այդ միտումները նկատելի են եղել վարկավորման բոլոր ուղղություններով:
Հիպոտեկային վարկերի աճի տեմպը շարունակել է բարձր մնալ, ինչը ուղեկցվել է անշարժ գույքի շուկայում գների բարձր տ/տ աճով: Վերջիններիս միմյանց փոխլրացնող ազդեցությունների արդյունքում հիպոտեկային վարկավորման ոլորտում հնարավոր են դիսկերի կուտակումներ, որոնց արդյունավետ հասցեագրման նպատակով ս. թ. ապրիլից գործում է պահանջ/գրավի արժեք առավելագույն սահմանաչափի մակրոպրոտեկցիալ գործիքը:
3. 2022թ. առաջին եռամսյակի համար գնահատված Ֆինանսական ցիկլի ինդեքսը շարունակել է աճել և մոտեցել է իր մեդիան արժեքին: Սակայն այդ աճը, ինչպես և նախորդ եռամսյակում, հիմնականում պայմանավորված է հիպոտեկային վարկավորման և անշարժ գույքի գների բարձր աճի տեմպերով: Նշված գործոնների ճշգրտման արդյունքում Ֆինանսական ցիկլի արժեքը էլ ավելի ցածր է մեդիան արժեքից և ավելցուկային վարկավորման դիսկեր չի նախանշում:
4. Վերը նկարագրված փաստերը վկայում են այն մասին, որ ՀՀ տնտեսությունը շարունակում է գտնվել ֆինանսական ցիկլի վերականգնման փուլում, և վարկավորման շուկայում դեռևս առկա չեն համակարգային դիսկի կուտակման իրական նախանշաններ: Հարկ է նշել նաև, վարկավորման շուկայի հետագա զարգացումները իրենց վրա կարող են կրել ներկայիս լարված աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված բարձր անորոշությունների հնարավոր ազդեցությունները:

Վերը նկարագրված փաստերի համապարփակ վերլուծության արդյունքում **Կենտրոնական բանկը նպատակահարմար է գտնում ԿՀԲ սահմանաչափը թողնել անփոփոխ՝ 0% մակարդակում:**